ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՒՆԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ՎՐԱ

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Վաղագույն դրամները, որոնց վրա արձանագրված է Հայաստանի անունը, վերաբերում են մ. թ. ա. I դարի վերջին։ Առաջին անգամ այդ անունը, լատիներեն տառերով, հիշատակվել է հռոմեական զորավար Մարկոս Անտոնիոսի դենարների (արծաթե դրամների) վրա՝ թողարկված մ. թ. ա. 32—31 թթ.։ Ընդհանուր առմամբ հնագույն մետաղե դրամները, որոնց գործառական նշանակությունը դրսևորվել էր մ. թ. ա. VII դարի սկզբին, իրենց վրա գրություններ չեն ունեցել։ Գրությունները անտիկ դրամների վրա հանդես են եկել ավելի ուշ՝ դասական և այնուհետև հելլենիստական ու կայսերական ժամանակներում, երբ վաղուց արդեն վերացել էր տոտեմական նշանակություն ունեցող կենդանական ու բուսական պատկերներով դրամներ թողարկելը և սկիզբ էր առել դիցական ու արքայական կերպարանքների դրոշմով, ինչպես նաև հունարեն ու լատիներեն արձանագրություններով դրամների դրվագումը։ Հայաստան երկիրը, որի միջով անցնում էին Առաջավոր Ասիայի տարբեր կողմերից եկած ապրանքային քարավաններն ու նաև նրանց ոսկե և արծաթե դրամները, մինչև Հռոմի Հանրապետության վերացումը դրամական միավորների վրա անվանական հիշատակություն չի ունեցել։

Ո՛չ հայկական թագավորությունները և ո՛չ էլ օտար պետությունները Հայաստանի անունով դրամներ չեն թողարկել։ Այդ են վկայում ինչպես Ծոփքի ու Կոմմագենի հայկական թագավորությունների մ. թ. ա. III—I դդ. պահպանված, այնպես էլ օտարների կողմից նախահելլենիստական ու հելլենիստական ժամանակներում թողարկված դրամները, որոնք իրենց վրա ունեցած պատկերների ու գրությունների բազմազանությամբ հայտնի են դրամագիտական հրատարակությունների շնորհիվ։ Անգամ Արտաշեսյանների հզորության ժամանակներում (Տիգրան Մեծի և նրա անմիջական հաջորդների օրոք) թողարկված դրամների վրա Հայաստանի անունը չի հիշատակվել։ Եվ դա զարմանալի չէ, որովհետև հայոց թագավորները դրամի վրա իրենց երկրի անունը նշելու կարիք չունեին։ Կարևոր էր դրամի վրա ներկայացնել իշխող գահակալի պատկերը, նրա անվանն ու տիտղոսներին վերաբերող գրությունները, ինչպես նաև պաշտամունքի հետ կապված դիցական կերպարանքները և այլ նշաններ։ Այդպես էր նաև հարևան երկրներում, ուշ հելլենիստական աշխարհում։ Մի կողմ թողնելով հին դրամների պատկերագրության, չափագիտության և շատ այլ բնույթի հարցեր, հետևելով միայն Հայաստան անվանձևերին, որոնք դրսևորվել են դրամական միավորների վրա, կարող ենք նշել, որ առաջին դրամը, որի վրա գրված է Հայաստանի անունը (լատիներեն ARMENIA *(ԱՐՄԵՆԻԱ) ձևով), թողարկված է մ. թ. ա. 32—31 թթ., հռոմեական զորավար Մարկոս Անտոնիոսի կողմից, նրա և Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի պատկերներով։ Հայաստանի անունը կրող այդ դրամները շրջանառության մեջ են մտել Մարկոս Անտոնիոսի զորքերի կողմից հայոց թագավոր Արտավազդ II-ի դեմ տարած հռոմեական «հաղթանակի» առթիվ՝ նպատակ ունենալով հաղորդել տվյալ «հաղթանակի» մասին ամենուրեք, ուր կարող էին միջազգային առևտրի պրոցեսում թափանցել արծաթե դրամները։ Սակայն հիշյալ դրամներից շատ քիչ օրինակներ են պահպանվել։ Հնարավոր է, որ դրանք զանգվածային թողարկում չեն ունեցել, բայց կարևոր են եղել հիշատակային նշանակությամբ։*

Հայաստանի անունով դրամների թողարկումները նկատելի են դառնում առավելապես Հռոմեական կայսրության ամրապնդման և ծավալման ժամանակներում, մասնավորապես Օկտավիանոս Օգոստոսի և նրա հաջորդների տարիներին։

Պահպանվել են հռոմեական ոսկե ու արծաթե դրամական միավորներ՝ դրվագված Հռոմում, մ. թ. ա. 20—18 թթ., որոնց վրա, Օկտավիանոս Օգոստոսի դիմաքանդակից բացի, վերացական հասկացողություններով, այլաբանորեն պատկերված են տեսարաններ Հայաստանի դեմ ունեցած հռոմեական «հաղթանակների» վերաբերյալ, ըստ որում՝ այդ հաղթանակների նշանակությունը ներկայացված է Հռոմի տերերի գնահատությամբ։ Այսպես, օրինակ, ոսկե դրամի վրա պատկերված է Վիկտորիան (հաղթության թևավոր դիցուհին), որը վերևից բռնել է հուժկու ցուլի պողերից և ձգտում է տապալել նրան։ Տվյալ պատկերին կից գրված է. վերևում՝ ARMENIA, իսկ ներքևում՝ CAPTA, ասել է թե՝ «Հայաստանը նվաճված»։ Դրամը տեսնողը, լիներ դա վաճառական թե զինվորական կամ ընդհանրապես գրագետ մեկը, ուղղակիորեն կարող էր հասկանալ, որ Հայաստանը եղել է այն հուժկու ցուլը, որին Հռոմը ձգտում էր հաղթել։ Այդ նույն տարիներին (մ. թ. ա. 20—18 թթ.), դրվագվել են նաև արծաթե դրամներ, որոնց վրա նույնպես արձանագրվել է ARMENIA անունը և միշտ Հռոմին որպես հաղթողի ներկայացնող պատկերներ։ Հայ ռազմիկը պատկերվում էր ձեռքերը կապված, զինաթափ կամ ծնկաչոք, ազատություն աղերսողի տեսքով։ Այդօրինակ դրամները հավաքվել են և ներկայումս առանձին օրինակներով պահվում են թանգարանների դրամագիտության բաժիններում։

Հիշատակային նշանակություն ունեցող դրամների թողարկումը Հռոմի կայսրության կողմից հետագայում շարունակվեց, և Հայաստանի անունով դրամների վրա դրսևորվեց ARMENIAC լատիներեն ձևը, որով ազդարարվում էր կայսեր հաղթության մասին։ Հայտնի են Ներոնի օրոք (54—68) թողարկված արծաթե երկդրամյանները, դրամյանները և կեսդրամյանները, որոնց վրա կենտրոնում՝ կայսեր դիմաքանդակի հակառակ կողմում, դիտվում է Վիկտորիայի կերպարանքը, իսկ սրան կից նշված է ARMENIAC բառը։ Այսինքն՝ գտնվել էր կայսրության գլխավոր միտքը հաղորդելու լակոնիկ ձևը, որի հիմքում ընկած էր ARMENIA երկրի անունը։ Հայաստանը Ներոնի կողմից նվաճված՝ այս էր նշանակում ARMENIAC ձևով և Ներոնի պատկերով դրամների թողարկումը։

Հռոմեական կայսրության արևելյան շրջաններում, 115 թ. թողարկվում են Տրայանոսի պատկերով շքադրամներ, որոնց վրա արձանագրված է Հայաստանի անունը, բայց այս անգամ հունարեն՝ ΑΡΜΕΝΙΑ ձևով։ Այդ դրամների վրա Տրայանոսը ներկայացվում է հաղթական տեսքով, իր կայսրական տիտղոսների համառոտագրություններով, իսկ Հայաստանը անձնավորված է կնոջ կերպարանքով։ Դրանցից բացի, ավելի շատ հայտնի են նաև Տրայանոսի պատկերով պղնձե շքադրամներ, թողարկված 116—117 թթ., որոնց վրա Հայաստանի անունը գրված է լատիներեն՝ ARMENIA, ըստ որում՝ նվաճված հայոց երկիրը պատկերված էր երկու գետերի (Տիգրիս և Եփրատ) միջև գլխիկոր նստած կնոջ կերպարանքով։ Այդ կարգի դրամները դրվագվել էին Տրայանոսի զորքերի կողմից Հայաստանը և Միջագետքը նվաճելու առթիվ։

Հայ-Հռոմեական հարաբերությունների առնչությամբ Հայաստանի անունը հիշատակվում է այնուհետև Անտոնինոս Պիոսի (138—161) պատկերով դրամների վրա, մասնավորապես 140 թ., երբ Հռոմի կայսրը հայոց վրա թագավոր է կարգում Արշակունի Սոյեմոսին։ Դրամի վրա պատկերված է թագադրության տեսարանը՝ Հռոմի կայսրը պսակ է դնում հայոց թագավորի գլխին, իսկ շուրջը լատիներեն գրված է՝ REX. ARMENIIS DATVS, այսինքն՝ «Հայերին թագավոր տրված»։ Հայաստանի անունը լատիներեն արտացոլված է նաև Մարկոս Ավրելիոսի և Լուկիոս Վերոսի դրամների վրա։

Հետագա դարերում նորից դրամների վրա արձանագրվում է Հայաստանի անունը, սակայն այս անգամ ոչ թե հունարեն կամ լատիներեն, այլ պահլավերեն՝ կապված սասանյան Իրանի պատմության հետ։ Պահպանվել են Սասանյան Պերոզ (457—483), Վաղկաշ (484—488), Կավատ (488—497 և 499—532), Խոսրով I (531—579), Որմիզդ IV (579—590), ինչպես նաև Խոսրով II (590—627) և Արտաշիր III (628—630) արքաների պատկերներով արծաթե դրամներ, որոնց վրա պահլավերեն տառերով կրճատ ձևով հիշատակված է Հայաստան անունը՝ [illegible] ։

Դրանց տիպային մանրամասնությունները, ժամանակագրության, պատկերագրության, չափագիտության տվյալները քննության ենթակա առանձին հարցեր են։ Սակայն այդ դրամները վկայում են, որ Սասանյանների օրոք ևս հիշատակվել է Հայաստանի անունը, ըստ որում ոչ թե ռազմաքաղաքական իրադարձությունների հետ կապված, ինչպես արվում էր հռոմեական ժամանակներում, այլ, որպես կանոն, իբրև այն երկրի անունը, որտեղ կատարվել է տվյալ դրամական միավորի դրվագումը։ Այդպես էր սասանյան տիրակալությանը ենթակա բոլոր երկրներում և այդ իրողությունը V դարի կեսից մշտապես իր արտահայտությունն էր գտել Հայաստանում թողարկվող դրամների պատկերագրության մեջ։ Շուրջ 150 տարի Իրանի Սասանյան արքաները Հայաստանի անունով դրամներ են թողարկել և դրանք շրջանառության մեջ ամենուրեք ներկայացնում էին որպես Իրանի սասանյան դրամներ՝ դրվագված Հայաստանում։ Հարկ է նկատել, որ Հայաստանում սասանյան դրամների թողարկման գլխավոր կենտրոնը եղել է Դվին քաղաքը։ Վերջինս հանդիսացել է հայոց երկրի քաղաքական, տնտեսական և հոգևոր մշակույթի կենտրոն, ուր դեռևս IV դարի կեսից հայ Արշակունի թագավորների արքունական պալատներն էին, իսկ հետագայում Սասանյան փոխարքաներն (մարզպաններն) էին այդտեղ ապրում։

VII դարի վերջից, երբ քաղաքական պատմության ասպարեզից մեկնացել էին Սասանյանները, Հայաստանի անունը դրամների վրա արձանագրելու սովորությունը գարձավ առավել կայուն արաբական տիրակալության ժամանակներում։ Նույն փողերանոցները, որոնք գործում էին Սասանյանների օրոք, շարունակեցին թողարկել արաբական դրամներ, որոնց վրա, այս անգամ արդեն լրիվ ձևով, արաբերեն քուֆի դրելաձևով բառացիորեն գրվում էր, որ դրամը, լիներ այն պղնձից, արծաթից թե ոսկուց, դրվագվել է Հայաստանում (بارمينية)։ Այդպես էր դրվածքը ոչ միայն Հայաստանի, այլև բոլոր այն երկրների համար, որոնք նվաճվել էին Արաբական խալիֆայության կողմից։

Պահպանվել են Հայաստանի անունը կրող բազմաթիվ դրամներ, որոնք վերաբերում են Օմայանների իշխանության տարիներին (VIII դարի առաջին կես)։ Մեզ հայտնի են Հայաստանի արաբական անվանումը կրող հիջրայի 78-ից մինչև 109 թթ., այսինքն՝ մ. թ. 698 թ. մինչև 728 թ. գրեթե անընդմեջ թողարկված արծաթե դրամներ (դիրհեմներ), որոնք բոլորն էլ վկայում են այդ մասին։

Հետագայում՝ Օմայանների տապալումից հետո, երբ Արաբական խալիֆայությունը բաժանվեց իրարից անկախ երկու՝ արևելյան և արևմտյան մասերի, արևելյան մասում, ուր հաստատվել էին Աբբասյանները, Հայաստանի անվան հիշատակությունը շարունակվեց աբբասյան դրամների վրա։ Պահպանված օրինակներից երևում է, որ թողարկման ընթացքը տևել է մոտ 200 տարի, հիջրայի 149 թ. մինչև 332 թ., այսինքն՝ VIII դարի 60-ական թթ. մինչև X դարի 40-ական թթ.։ Եվ այդպես միշտ, որպես կանոն, աբբասյան դրամների վրա հիշատակվում էր Հայաստանի անունն Արմինիյա արաբերեն ձևով։ Քննությունները պարզել են, որ դրամները դրվագվում էին Հայաստանի այդ ժամանակներում առևտրի ու արհեստագործության ամենահիշոր կենտրոնը հանդիսացող Դվին քաղաքում։ Արաբական աղբյուրներում այն հայտնի էր Դեբիլ

կամ Դաբիլ անունով։ Սակայն բուն քաղաքի անվան արաբական ձևով դրամներ շատ քիչ են պահպանվել։ Աբբասյանների օրոք Դվինում գործող փողհատանոցը թողարկել է դրամներ առավելապես ողջ երկրի՝ Հայաստանի արաբական անունով, չնայած երկրի առանձին քաղաքների անուններով ևս դրամներ էին դրվագվում։ Հարկ է նկատի ունենալ նաև, որ արաբական տիրակալության ժամանակներում Հայաստանի մեջ վարչականորեն մտնում էին ողջ Աղվանքը և Վրաստանի արևելյան մասը։ Հայաստանում դրվագված աբբասյան դրամները նախատեսված էին սպասարկելու նախ և առաջ ապրանքափոխանակության հայկական և նրանց հետ կապված հայաշատ քաղաքների արտաքին ու ներքին առևտրի պահանջները։

Արևելյան խալիֆայության անկման շրջանում, երբ նրա լայնածավալ տարածքի վրա առաջացել էին Աբբասյաններից կիսանկախ ու անկախ ամիրայություններ, վերջիններս նվաճել էին սեփական դրամ կտրելու իրավունքը և ներքին ու արտաքին առևտրի համար թողարկում էին իրենց դրամական միավորները (արծաթե, պղնձե, երբեմն ոսկե)։ Հայաստանում այդպիսիներից էին Սաջյան ամիրաները, որ տիրելով Կուր-Արաքս միջագետքի տնտեսական խոշոր կենտրոններին, ներքին ու արտաքին առևտրի համար իրենց դրամներն էին դրվագել տալիս։ Հայաստանում նրանք դրամներ են թողարկել Դվին քաղաքում, որոնց վրա հիշատակել են ողջ երկրի անունը, չնայած տիրում էին միայն Դվինին։ Ընդօրինակելով միջազգային շուկայում այդ ժամանակներում լայնորեն տարածված աբբասյան դրամների տիպային տվյալները, ընդունելով աբբասյան խալիֆայի հոգևոր առաջնորդությունը (դրամների վրա ևս նշվում էին նրա պատվանունը), Սաջյանները որոշակիորեն հիշատակում էին նաև իրենց սեփական անունները։ Շրջանառության մեջ Սաջյան ամիրաների դրամները չէին դատված նրանց ժամանակակից Աբբասյան և այլ մահմեդական դինաստիաների դրամներից։ Դրանք միասին ընդունվում էին առևտրում որպես արծաթ ըստ քաշի, այսինքն՝ ոչ թե հատ հաշվով, այլ կշռով։ Այդ ժամանակներում միջազգային առևտրում ազնիվ մետաղներից, մասնավորապես արծաթից ու ոսկուց դրվագած դրամներն էին գտնվում շրջանառության մեջ։ Թողարկված լինելով տարբեր երկրներում, նրանց հիմնական միավորը հանդես էր գալիս նախապես սահմանված կշռային չափից որոշ (թեկուզև անշան) տարբերություններով։ Ապրանքափոխանակության գործարքներում միշտ կարևորը համարվում էր ազնիվ մետաղի զտության աստիճանը և նրանից հատված դրամական միավորի կշռային չափը։ Դրամի վրա դրոշմած պատկերներն ու գրությունները կարևորություն չունեին օտարերկրյա վաճառականների համար։ Դրանք արտացոլում էին դրամը թողարկող յուրաքանչյուր երկրի քաղաքական, գաղափարական, մասնավորապես դավանաբանական հարցերը։ Հայաստանում Շիրակի հայ Բագրատունյաց թագավորները իրենց պատկերներով և հայերեն գրությամբ դրամներ չէին թողարկում։ Վրաստանում վրաց Բագրատունի թագավորները դրամներ թողարկում էին, բայց դրանց արծաթե միավորները շատ ընչին չափով էին մտնում միջազգային առևտրի ոլորտը։ X—XI դդ. վրաց թագավորների արծաթե դրամները պահպանվել են հատուկենտ նմուշներով (Դավիթ Կյուրապաղատ, Բագրատ III, Բագրատ IV)։ Վրաստանում առաջացած մահմեդական դավանանքի Ջաֆարյան ամիրաներն անգամ, որոնք տիրել էին Թիֆլիսին, ոչ շատ նկատելի հետք են թողել X—XI դդ. դրամական տնտեսության մեջ, եթե նկատի ունենանք մասնավորապես Մանսուր իբն Ջաֆարի 953—955 թթ., Ջաֆար իբն Մանսուրի 974—981 թթ. և Ալի իբն Ջաֆարի 996—1027 թթ. արծաթե դրամները, որոնք իրենց տիպային տվյալներով նման էին աբբասյան դիրհեմներին, վերջիններիս արաբերեն արձանագրությունների ընդօրինակությամբ։ Իրանի քաղաքներում ևս թողարկվում էին Աբբասյաններից ընդօրինակված առավելապես արծաթե դրամներ, Աբբասյան խալիֆայի և տեղական ամիրաների անունների արաբերեն արձանագրություններով։ Մինչև X դարի վերջը համաշխարհային շուկայում զանգվածորեն իշխում էին աբբասյան դիրհեմները։ Սաջյանների օրոք Դվինում թո-

դարկվում էին միաժամանակ ինչպես աբբասյան, այնպես էլ սաջյան դրամներ, որոնք շրջանառության մեջ միասին էին հանդես գալիս։ Սաջյաններից հետո Հայաստանի անունը դրամների վրա արտացոլվում էր քաղաքական պատմության ասպարեզ մտած, ծագումով քուրդ, Դայսամ իբն Իբրահիմի արծաթե դրամների վրա։ Ամիրա Դայսամը (934—953) ո՛չ հոր և ո՛չ էլ մոր կողմից ազգակցական կապ չուներ Սաջյանների հետ։ Սակայն, օգտվելով քաղաքական իրադրությունից, պայքարի մեջ էր մտել տիրելու Սաջյանների զավթած հողերը։ Միակ դրամագիտական վկայությունը, որ պահպանվել է այդ տարիներից և կրում է իր վրա Հայաստանի անունը Արմինիյա արաբերեն ձևով, հանդիսանում է Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդիի արծաթե դրամը՝ հիջրայի 330 տարեթվով, այսինքն՝ դրվագված մ. թ. 941—942 թթ., Դվին քաղաքում։ Ներկայումս այն պահվում է Լենինգրադում (Պետական էրմիտաժում, կշիռը՝ 2,63 գր., տրամագիծը՝ 26,5 մմ, արծաթի բարձր որակով)[1]։

Վերջին երկու տասնամյակների ընթացքում հայտնաբերվել են նաև մի քանի արծաթե դրամներ, թողարկված Դայսամ իբն Իբրահիմի կողմից X դարի 40-ական թթ. Պարտավում և Արդեբիլում։ Մինչդեռ Մեծ Հայքի հյուսիս-արևելյան կողմում, մասնավորապես Դվինում, նրա ունեցած կարճատև իշխանությունից մնացել է միայն վերոհիշյալ էրմիտաժյան օրինակը։

X դարի 60-ական թթ. սկզբին Հայաստանի անունը դրոշմվում է նույն արաբական Արմինիյա ձևով Բուվեհյան ամիրա Ռուկն ադ-Դաուլա Հասանի ոսկե դրամների վրա։ Հարկ է ենթադրել, որ ոսկե այդ դրամների թողարկումը կատարվել է, ինչպես միշտ, Դվին քաղաքում, որի քաղաքական պատմության մեջ Բուվեհյանների մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Ոսկե դրամների վրա նշված հիջրայի 350, 351, 352 տարեթվերը համապատասխանում են 961—962 և 963 թթ., երբ Հայաստանում Բագրատունյաց գահի վրա էր հայոց Աշոտ III թագավորը (953—977)։ Ի՞նչ հանգամանքների բերումով են թողարկվել Հայաստանի անունը կրող ոսկե դրամները Ջեբալի Բուվեհյան ամիրապետ Ռուկն ադ-Դաուլա Հասանի կողմից, առաջիկայում պարզելու հարց է[2]։

X դարի վերջերից Հայաստանի դրամական տնտեսության մեջ նկատելիորեն նվազում է արաբական դրամների հոսքը, որ մինչ այդ առատորեն գալիս էր Մերձավոր Արևելքի երկրներից, մասնավորապես Իրանից ու Միջագետքից։ Սակայն նկատելի է դառնում նաև Բյուզանդական կայսրության դրամների թափանցումը, որ շատ նվազել էր խալիֆայության հզորության շրջանում։ Բյուզանդական ոսկե դրամները միջազգային շուկայում լայնորեն տարածվել էին X դարի վերջերին և XI դարում։ Բյուզանդական ոսկին դիտվում էր ամենուրեք, ոչ միայն Հայաստանում ու հարևան երկրներում, այլև Եվրոպայում։ Միայն Անդրկովկասում գտնված ոսկե դրամական գանձերը բավական են տեսնելու համար, թե ինչպես էր փոխվել հարաբերակցությունը դրամական տնտեսության մեջ ի գերակշռություն Բյուզանդիայի։ Անի քաղաքի պեղածո դրամագիտական նյութերը ամբողջությամբ այդ մասին են վկայում։ Դվին քաղաքի մոտ գտնված բյուզանդական ոսկե դրամների գանձը՝ բաղկացած բացառապես Կոստանդին VIII կայսեր (1025—1028) ընդհանուր թվով ավելի քան 3500 ոսկե սոլիդներից (յուրաքանչյուրը մոտ 4,30 գրամ), իրեղեն ապացույց է Հայաստանում բյուզանդական ոսկե դրամի ունեցած գերիշխող դերի մասին XI դարում։ Սակայն Բյուզանդական կայսրության հարաբերությունները որքան էլ որ անմիջական են եղել նրան մերձավոր Հայաստանի հետ, այդուհանդերձ դեռևս բացակայում են բյուզանդական ծագում ունեցող այնպիսի դրամները, որոնց վրա գրված լիներ Հայաստանի անունը։ Այդ ուղղու-

---

[1] А. А. Быков. Монеты Дайсама ибн Ибрахима ал-Курды. М., 1960, с. 6, табл. I, № 3.—XXV Международный конгресс востоковедов. Доклады делегации СССР.

[2] Г. Н. Джапаридзе. Из истории арабской нумизматики и метрологии IX—X вв. (автореферат канд. дисс.). Тбилиси, 1968, с. 7—9.

թյամբ դրամագիտական հիշատակներ չեն պահպանվել։ Տասնամյակներ անց, սելջուկյան զավթիչները և նրանց հետ կապված թուրք աթաբեկները XII—XIII դդ. ևս Հայաստանի անունով դրամներ չեն թողարկել։ Համենայն դեպս պատմության սելջուկյան շրջանից Հայաստանի անունով դրամներ չեն պահպանվել, եթե նկատի ունենանք թանգարաններում հավաքված դրամագիտական բնույթի նյութերը։ Արտաքին ու ներքին առևտրի կարիքների համար հայկական քաղաքներում սելջուկների կողմից թողարկված դրամների վրա նշվում էին միայն բուն քաղաքների անունները, բայց ոչ երբեք ողջ երկրի անունը[3]։

Հետագայում, ավելի քան երեք հարյուր տարի անց, երբ սելջուկ-թուրքերի տիրապետությունը վերացել էր, նոր իրադրությունների բերումով Հայաստանի անունը նորից դիտվում է դրամների վրա ու այս անգամ ևս այն արձանագրվում է արաբական ժամանակներից հայտնի Արմինիյա արաբերեն ձևով։ Սակայն քանակապես դրանք շատ ավելի քիչ են պահպանվել, հատուկենտ օրինակներով։

Իսկ ովքե՞ր էին հետսելջուկյան շրջանի այն տիրակալները, որոնք իրենց դրամների վրա դրոշմում էին Հայաստանի անունը։ Ինչպես վկայում են գտնված դրամները, դրանք Մերձավոր Արևելքում երբեմնի հզոր, մոնղոլական ծագում ունեցող երկու դինաստիաների առանձին խաներն էին։ Ժամանակագրական կարգով այդ անունը առաջինը գիտվում է Հուլաղույան Ղազան Մահմուդ խանի օրոք (1295—1304) թողարկված բացառապես արաբերեն գրություններով արծաթե դրամների վրա։ Ըստ տարեթվի դրանք շրջանառության մեջ մտել են հիջրայի 700, այսինքն 1300/1301 թ. կամ այլ կերպ ասած՝ XIV դարի սկզբին։ Տասը տարի անց, Ղազան Մահմուդի հաջորդի՝ Հուլաղույան Մուհամմեդ Խուդաբանդա Օլջեյտու խանի օրոք (1304—1316) ևս թողարկվում են Հայաստանի արաբերեն անունը կրող արծաթե երկդրամյաններ, որոնց վրա պահպանվել է ինչպես նրանց դրվագման տարեթիվը՝ հիջրայի 719, այսինքն՝ 1310/1311 թ., այնպես էլ իրեն՝ Օլջեյտու խանի անունը։

Նուրջ յոթանասուն տարի անց, երբ Իրանում պատմության ասպարեզ էին մտել Հուլաղույաններին հաջորդած Ջալաիրյանները (1336—1432), նորից դրամների վրա արտացոլվում է Հայաստանի անունը, ըստ որում՝ նույն արաբերեն Արմինիյա ձևով։ Այս անգամ այն դրոշմված է Ջալաիրյան Ղիյաս ադ-դին Ահմեդ խանի (1382—1385) արծաթե դրամի վրա։ Դժբախտաբար դրամի վրա նշված նրա դրվագման տարեթիվը ջնջված է։ Ըստ էության Ջալաիրյան հիշյալ դիրհեմը հանդիսանում է վերջին վկայությունը Հայաստանի անունը կրող XIV դարի դրամների շարքից։

Հետագայում Հայաստանի անունը դրամների վրա գրեթե չի հիշատակվում, եթե զանց առնենք Բրիտանական թանգարանում պահվող օսմանյան դրամների շարքում մի հազվագյուտ օրինակ, որի վրա դրոշմված գրություններին կանդրադառնանք առանձին։

Ամփոփելով վերոհիշյալ տվյալները, կարող ենք նշել, որ Հայաստանի անունը դրամների վրա արձանագրվել է բացառապես օտար պետությունների կողմից՝ մ. թ. ա. I դարի 30-ական թթ. սկզբից մինչև XIV դարի 80-ական թթ. (1382—1385 թթ.)։ Ավելի քան 1400 տարի ընդգրկող այդ ժամանակաշրջանի դրամները հիշատակում են Հայաստանի պատմության այն փուլերը, որոնք կապված են եղել Հռոմի կայսրության, սասանյան Իրանի, Արաբական խալիֆայության (Օմայան և Աբբասյան դինաստիաների), Սաջյան, Բուվեհյան ամիրաների, Հուլաղույան խաների, ինչպես նաև Հուլաղույաններին հաջորդած Ջալաիրյանների հետ։

Հայաստանի անունը դրամների վրա հիշատակվել է լատիներեն, շատ քիչ հունարեն, պահլավերեն և առավելապես արաբերեն լրիվ կամ կրճատ արձանագրություններով։ Ստորև ներկայացնում ենք Հայաստանի անունը կրող դրամագիտական վկայությունների ցանկը.

---

3 Խ. Ա. Մուշեղյան. Դրամական շրջանառությունը Հայաստանում. Երևան, 1983, էջ 217—219։

	Դրամի նյութը, պատկանելությունը և անվանումը	Հայաստանի անվան տեր դրված դրամի վրա	Դրամի թողարկման ժամանակը կամ տարեթիվը	Սկզբնաղբյուրները
1	2	3	4	5
1	Արծաթ, հռոմեական, Մարկոս Անտոնիոս (43—31), դենարիուս։	ARMEN'A	մ. թ. ա. 32-31 թթ.	ՀՊԹ, №№ 15143, 16116; S, 194, № 1210
2	Ոսկի, հռոմեական, Օկտավիանոս Օգոստոս (մ.թ.ա. 27—մ.թ. 14), աուրեուս։	ARMENIA	մ. թ. ա. 20-18 թթ.	Mattingly, I, 108, № 671, pl. 16, № 14
3	Արծաթ, հռոմեական, Օկտավիանոս Օգոստոս (մ.թ.ա. 27—մ.թ. 14), դենարիուս։	ARMENIA	»	Mattingly, I, 109, №№ 672—675, pl, 16, №№ 15—17
4	Արծաթ, հռոմեական, Օկտավիանոս Օգոստոս (մ.թ.ա. 27—մ.թ. 14), դենարիուս։	ARMENIA	»	Mattingly, I, 8, № 44, pl. 2, № 4
5	»	ARME	»	Mattingly, I, 4—8, №№ 18—21. pl. 1 №№10—12, 43, pl 2, № 3
6	»	ARMEN	»	Mattingly, I, 109, №№ 676. 678, pl. 16, №№ 18, 19
7	Արծաթ, հռոմեական, Ներոն (54—68), դիդրախմ։	ARMENIAC	59 թ.	Mattingly, I, 281, № 405, pl. 40, № 16
8	Պղինձ, հռոմեական, Տրայանոս (98—118), սեստեր։	ARMENIA	115 թ.	ՀՊԹ, №№ 22456—22470; Mattingly, III, 221, №№ 1033—1041
9	»	»	116-117 թթ.	ՀՊԹ, № 29990 Mattingly, III, pl 42, № 7
10	Պղինձ, հռոմեական, Անտոնինոս Պիոս (138—161), սեստեր։	ARMENIIS	140 թ.	ՀՊԹ, № 17625/11, DS, 94, № 1168
11	Ոսկի, հռոմեական, Լուկիոս Վերոս (161—169), աուրեուս։	ARMEN. ARMENIACVS	163 թ.	Mattingly, IV, pl. 29, № 2, pl. 57, № 13

1	2	3	4	5
12	Ոսկի, հռոմեական, Լուկիոս Վերոս (161—169), սուրեուս։	»	164 թ.	Mattingly, IV, pl 58, № 11
13	Ոսկի, հռոմեական, Լուկիոս Վերոս (161—169), սուրեուս։	ARM	168 թ.	ՀՊ, 103, № 50
14	Արծաթ, հռոմեական, Լուկիոս Վերոս (161—169), դենարիուս։	ARMENIACVS ARMEN.	163 թ.	ՀՊԹ, № 22468, Mattingly, IV, pl. 57, № 14; ՀՊ, 111, № 92
15	Պղինձ, հռոմեական, Լուկիոս Վերոս (161—169), սեստեր։	ARMENIACVS	164 թ.	Mattingly, IV, pl. 75, № 12; ՀՊ, 122, № 170
16	Պղինձ, հռոմեական, Լուկիոս Վերոս (161—169), սեստեր։	ARMENIIS	164 թ.	ՀՊԹ, № 12569
17	Պղինձ, հռոմեական, Լուկիոս Վերոս (161—169), դուպոնդիուս։	ARMEN	164 թ.	ՀՊԹ, № 12572
18	Պղինձ, հռոմեական, Լուկիոս Վերոս (161—169), դուպոնդիուս։	ARM	166 թ.	ՀՊԹ, № 12571
19	»	ARMENIA	164-165 թթ.	ՀՊ, 147—150
20	Ոսկի, հռոմեական, Մարկոս Ավրելիոս (161—180), սուրեուս։	ARMEN	163-164 թթ.	Mattingly, IV, ՀՊ, 153, № 333
21	Արծաթ, հռոմեական, Մարկոս Ավրելիոս (161—180), դենարիուս։	ARMEN	164 թ.	ՀՊԹ, № 22462
22	Պղինձ, հռոմեական, Մարկոս Ավրելիոս (161—180), սեստեր։	ARMENIACVS	164 թ.	ՀՊԹ, № 12579
23	Պղինձ, հռոմեական, Մարկոս Ավրելիոս (161—180), դիպոնդիուս։	ARM	164 թ.	ՀՊԹ, № 12573

1	2	3	4	5
24	Պղինձ, հռոմեական, Մարկոս Ավրելիոս (161—180), քվադրանս։	ARMENIACVS ARMEN	164 թ.	ՀՊ, 187—188, № 597
25	Արծաթ, հռոմեական, Մարկոս Ավրելիոս (161—180), դենարիուս։	ARMENIA	164-165 թթ.	ՀՊ, 189—190, №№ 598—600
26	Պղինձ, հռոմեական, Մարկոս Ավրելիոս (161—180), սեստերս։	ARMENIACVS	163-164 թթ.	HC, 205, № 348; ՀՊ, 197, № 2
27	»	ARMENIA	»	ՀՊ, 118, № 4
28	»	»	164-165 թթ.	HC, 173, № 14
29	»	»	167-168 թթ.	HC, 174. № 16
30	Արծաթ, սասանյան, Պերոզ (457—483), դրախմ։	تدكه	V դարի 60-ական թթ.	MM, 147
31	Արծաթ, սասանյան, Վաղկաշ (484—488), դրախմ։	»	V դ. 80-ական թթ.	MM, 147
32	Արծաթ, սասանյան, Կավատ (488—532), դրախմ։	»	V-VI դդ. սահմանին	»
33	Արծաթ, սասանյան, Խոսրով I (488—532), դրախմ։	»	VI դ.	MM, 148
34	Արծաթ, սասանյան, Որմիզդ IV (579—590), դրախմ։	»	VI դ. 80-ական թթ.	»
35	Արծաթ, սասանյան, Խոսրով II (590—627)։	»	VI դ. վերջին	MM, 148
36	Արծաթ, սասանյան, Արտաշիր III (628—630)։	»	VII դար	MM, 149
37	Արծաթ, արաբական, Օմայաններ, Աբդ ալ-Մելիք (685—705), դիրհեմ։	ارمينية	հիջ. 78 (697-698 թթ.)	Պերճ Սապպաղյան, Արաբական առաջին դիրեմը, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Հալեպ, 1975։ Դրամը պահվում է Բաղդադի թանգարանի դրամագիտության բաժնում, № 14472

1	2	3	4	5
38	Արծաթ, արաբական, Օմայաններ, Աբդ ալ-Մելիք (685—705), դիրհեմ։	أرمينية	81 (700-701 թթ.	HN, 67 № 304, taf. IV
39	Արծաթ, արաբական, Օմայաններ, ալ-Վալիդ (705—715) դիրհեմ։	»	92 (710-711 թթ.)	T, № 2725
40	Արծաթ, արաբական, Օմայաններ, ալ-Վալիդ (705—715) դիրհեմ։	»	94 (712-713)	T, № 401
41	Արծաթ, արաբական, Օմայաններ, ալ-Վալիդ դիրհեմ։	»	95 (713-714 թթ.)	T, № 429; L, № 239; HN, № 347; AZ, № 49; Э, № 71
42	»	»	96 (714-715 թթ.)	T, № 439; L, № 240; HN, № 348; M, 5, №№ 135—137
43	Արծաթ, արաբական, Օմայաններ, Սուլեյման (715—717), դիրհեմ։	»	97 (715-716 թթ.)	T, № 450; M. 6, № 140, W, № 64
44	Արծաթ, արաբական, Օմայաններ, Սուլեյման (715—717), դիրհեմ։	»	98 (716-718 թթ.)	T, № 424; L, № 239; № 117; M, 6, №№ 150, 151
45	Արծաթ, արաբական, Օմայաններ, Ումար իբն Աբդ ալ-Ազիզ (720—724), դիրհեմ։	»	99 (717-718 թթ.)	T, № 472; L, № 242; W, № 68; M, 7, № 62; HN № 445
46	Արծաթ, արաբական, Օմայաններ, Ումար իբն Աբդ ալ-Ազիզ (720—724), դիրհեմ։	»	100 (718-719 թթ.)	T, № 480; BM, I, № 48; M, 7, №№ 169, 170

1	2	3	4	5
47	Արծաթ, արաբական, Օմայաններ, Յազիդ (720—724), դիրհեմ։	ارمينية	101 (719-720 թթ.)	T, № 491; W, № 71; HN, № 470; M, 7, №№ 178—181
48	»	»	102 (720-721 թթ.)	T, № 499; W, № 72; HN, № 482; M, 8, №№ 185—186
49	»	»	103 (721-722 թթ.)	T, № 507; L, № 246; W, № 75; HN, № 483
50	»	»	104 (722-723 թթ.)	T, № 513; L, № 430; W, № 76; Э, № 89/91
51	»	»	105 (723,724 թթ.)	T, № 521; M, 8, № 202
52	Արծաթ. արաբական, Օմայաններ, Հիշամ (724—743), դիրհեմ։	»	106 (724-725 թթ.)	T, № 526
53	»	»	107 (725-726 թթ.)	T, № 532; HN, № 509
54	»	»	108 (726-727 թթ.)	T, № 536; П, № 50
55	»	»	109 (727-728 թթ.)	T, № 543; L, № 466
56	Պղինձ, արաբական, Օմայաններ, (661—750), ֆելս։	»	անտարեթիվ	BM, 180, № 39; HN, № 1939, M, 62, № 1168; ՀՊԹ, №№ 17674, 17173/8
57	»	»	123 (740-741 թթ.)	П, 53
58-127	Արծաթ, արաբական, Աբբասյաններ, տարբեր խալիֆաների դիրհեմներ։	»	143-332 թթ. (760-944 թթ.)	ՀՍՍՀ ԳԱ Պատմա-բանասիրական հանդես, 1973, № 4 (տե՛ս հավելվածը)
128	Ոսկի. Սաջյաններ, Յուսուֆ իբն Դիվդադ (901—923), դինար։	»	300 (912-913 թթ.)	Э, № 815; Ф, № 15; МИА, № 32604

1	2	3	4	5
129	Արծաթ, Սաջյաններ, Յուսուֆ իբն Դիվդադ (901—923), դիրհեմ։	ارمينية	301 (913-914 թթ.)	Э, № 977 (6568)
130	»	»	302 (914-915 թթ.)	W, № 929
131	»	»	315 (927)	Ф, էջ 15, № 21
132	»	»	319 (931 թ.)	ՀՊԹ, № 17372
133	Արծաթ, Դայսամ իբն Իբրահիմ Ալ-Քուրդի (934—953), դիրհեմ։	»	330 (941-942 թթ.)	ЭВ, X, 15—19, աղ. I—II
134	Ոսկի, Բուվեհյան, Ռուկն ադ-Դաուլա Հասան (947—977), դինար։	»	350 (961-962 թթ.)	Sumer, X, 1954, № 2, pp. 191—192
135	Ոսկի, Բուվեհյան, Ռուկն ադ-Դաուլա Հասան (947—977), դինար։	»	351 (962 թ.)	Sumer, X, 1954, № 2, pp. 191—192
136	»	»	352 (963 թ.)	»
137	Արծաթ, Հուլաղույան, Ղազան Մահմուդ (1295—1304), դիրհեմ։	»	700 (1300-1301 թթ.)	BM, VI, № 106
138	Արծաթ, Հուլաղույան, Օլջեյտու (1304—1316), երկդիրհեմ։	»	710	M, 579, № 220; Э, № 219
139	Արծաթ, Ջալաիրյան, Ղիյաս ադ-Դին Ահմեդ խան (1382—1385), դիրհեմ։	»	ջնջված տարեթվով	BM, VI, № 650, pl. X

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԶՊ—Զարեհ Պաուկյան. Հայաստանի վերաբերյալ հռոմեական դրամներ և մեդալիոններ. Վիեննա, 1971 (Ազգային մատենադարան հ. Մժե)

ԽՄ—Խաչատուր Մուշեղյան. Դրամական շրջանառությունը Հայաստանում. Երևան, 1983

ՀՊԹ—Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժին

М.—А. Марков. Инвентарный каталог мусульманских монет императорского Эрмитажа. Спб., 1896

МИА—Музей истории Азербайджана (г. Баку)

П.—Е. А. Пахомов. Монеты Азербайджана. Вып. I. Баку, 1959; вып. II. Баку, 1963

Т.—В. Тизенгаузен. Монеты восточного халифата. Спб., 1873

Ф.—Р. Р. Фасмер. О монетах Саджидов.—Известия общества обследования и изучения Азербайджана. 1927, № 5

Ш.—Р. Шерцель. Описание медалей и монет императорского Харьковского университета. Харьков, 1912

Э.—Рукописный каталог отдела нумизматики Государственного ордена Ленина Эрмитажа (Ленинград)

ЭВ—Эпиграфика Востока

AZ—Ahmed Ziya. Catalogue of Islamic coins. Constantinople, 1910

BM—Stanley Lane-Poole. Catalogue of oriental coins in the British Muzeum. Vol. I. London, 1875. The coins of Eastern Khaleefats

Dorn—B. Dorn. Inventaire des monnaies des Khalifes orientaux. St. Peterbourg, 1877

DS—D. Sear. Roman coins and their values. London, 1964

GE—I. Ghalib Edhem. Catalogie des monnaies des Khalifes (Musée Impérial Ottoman). Constantinople, 1894

HC—H. Cohen. Description historique des monnaies sous l'empire romain communément appelees. Paris, 1883

HN—H. Nützel. Katalog der orientalischen Münzen. I. Berlin, 1898

KL—Stanley Lane-Poole. Catalogue of the Collection of Arabic coins preserved in the Khedival Library at Cairo London, 1897

L—H. Lavoix. Catalogue des monnaies musulmanes de la Bibliothèque Nationale. I. Paris, 1887

MM—Michael Mitchiner. Ancient and classical World (600 B. C. — A. D. 650). London, 1978

Mattingly—Harold Mattingly. Coinage of the Roman Empire in the British Museum. London. vol. I, 1923; vol. II, 1930; vol. III, 1936; vol. IV, 1940

PB—Paul Z. Bedoukian. A classification of the coins of the Artaxiad dynasty of Armenia. New York, 1968

S—Sydenham. The coinage of the Roman Republic, London, 1952

W—A. Weyl. Verzeichnis der reichhaltigen Sammlung orientalischer Münzen des Fursten G. Berlin, 1885

WAB—John Walker. A catalogue of the Arab-Byzantine and post reform Umaiyad coins. British Museum. London, 1956

НАЗВАНИЕ АРМЕНИИ НА ДРЕВНИХ И СРЕДНЕВЕКОВЫХ МОНЕТАХ

Доктор ист. наук Х. А. МУШЕГЯН

Резюме

Исследование нумизматического материала показывает, что самые ранние монеты, на которых обозначено название страны армян—Армении, относятся к началу тридцатых годов I в. до н. э.; это памятные римские монеты (денарии) Марка Антония. В дальнейшем памятные монеты с названием Армении в латинской форме выпускались при императорах Августе, Нероне, Траяне, Антонине Пии, Луции Вере, Марке Аврелии. На этих монетах имя *Армения* приводилось часто полностью—Armenia, а также сокращенно—ARM.

С конца V в. н. э. Армения сокращенно именовалась пехлевийскими буквами на сасанидских монетах Ирана. Об этом свидетельствуют драхмы сасанидских царей Пероза, Вагарша, Кавата, Хосрова I Ануширвана, Хармузда IV, Хосрова II Парвеза и Арташира III.

С первых лет VIII в. Армения упоминается по-арабски в надписях строго куфического стиля на монетах Арабского халифата. Сохранились омайадские, дирхемы этого рода, выпущенные при халифах Абдал-Мелике, Валиде I, Сулеймане, Абд ал-Азизе, Йазиде II и Хишаме. В дальнейшем название Армении стали приводить на своих монетах арабские халифы из династии Аббасидов. Самая ранняя аббасидская монета с упоминанием Армении относится к концу 50-х годов VIII в., а позднейшая—к середине X в. После распада Восточного халифата в обращении появились подобные монеты, выпущенные саджидским эмиром Йусуфом ион Дивдадом (901—923). Арабская форма имени Армении (*Арминия*—ارمينية) сохранилась также на куфических дирхемах Дансама ибн Ибрахима (934—953)—претендента на власть Саджидов. Позже появились куфические монеты с названием Армении бундского эмира Рукн ад-даула Хасана (947—977), однако они чрезвычайно редки среди денежных единиц X в.

На монетах XI—XIII вв. название Армении не встречается. С начала XIV в., в связи с возобновлением выпуска денежных единиц из серебра, Армения вновь упоминается на дирхемах. Это хулагуидские серебряные монеты, чеканенные при Газан Махмуд-хане (1295—1304), а также при Олджейту (1304—1316), и очень редко—серебряные легковесные дирхемы джеларида Гийас ад-дин Ахмед-хана (1382—1385).

Хронологический разрыв между самыми ранними и позднейшими монетами с названием Армении составляет около 1400 лет. Все эти монеты выпущены иноземными властями и отражают соответствующие этапы политической истории Армении. В конце исследования дается список рассматриваемых монет.